Լրացուցիչ Ապահովության Եկամուտ (SSI) Օտար Քաղաքացիների Համար

Ո՞վ կարող է ստանալ Լրացուցիչ սոցիալական եկամուտ (SSI)

Որպես կանոն, եթե դուք ոչ քաղաքացի եք Ներքին անվտան գության վարչության կողմից շնորհված ներ գաղթի որոշակի կար գերից մեկում, ապա դուք կարող եք իրավասու լինել SSI-ի համար, եթե.

- Դուք օրինական հիմունքներով ապրել եք Միացյալ Նահան գներում 1996թ. օ գոստոսի 22-ին եւ դուք կույր եք կամ հաշմանդամ.
- 1996թ. օ գոստոսի 22-ին դուք ստանում էիք SSI – դուք օրինական հիմունքներով ապրում եք Միացյալ Նահան գներում:
- Դուք օրինական հիմունքներով ընդունվել եք մշտական բնակության համար համաձայն Ներ գաղթի եւ հպատակա գրման օրենքի (INA) եւ ընդհանուր առմամբ ունեք Միացյալ Նահան գներում աշխատանքի 40 կրեդիտ: (Ձեր ամուսնու (կնոջ) կամ ծնողի աշխատանքը նույնպես կարող է հաշվի առնվել):

Կարեւոր ծանուցում: *Եթե դուք Ամերիկայի Միացյալ Նահան գներ մուրք եք գործել 1996թ. օ գոստոսի 22-ին կամ ավելի ուշ, ապա դուք հնարավոր է իրավասու չլինեք SSI-ի համար առաջին 5 տարվա ընթացքում որպես օրինական հիմունքներով ընդունված մշտական բնակիչ՝ նույնիսկ եթե դուք ունենաք հասույթի 40 որակավորող կրեդիտ:*

Որոշ այլ ոչ քաղաքացիներ, ովքեր կարող են իրավասու լինել SSI-ի վճարումների համար, հետեւյալն են.

- ԱՄՆ զինված ուժերի իսկական ծառայության անդամներ.
- Դաշնային մակարդակով ճանաչված հնդկական ցեղերի ոչ քաղաքացի անդամներ.
- Որոշակի ոչ քաղաքացիներ, որոնք ընդունվել են որպես ամերիկա-ասիական ներ գաղթյալներ. ինչպես նաեւ
- Կուբայական/Հայիթյան ժամանողներ ըստ Փասխստականներին կրթական օ գնության մասին օրենքի:

Գոյություն ունեն այլ ոչ քաղաքացիներ, ովքեր նույնպես կարող են իրավասու լինել վճարումներ ստանալու համար: Եթե դուք ոչ քաղաքացի եք եւ ուզում եք դիմել SSI-ի նպաստաների համար, ապա որպեսզի ճշտեք, թե արդյոք դուք իրավասու եք, ամենից լավ է դիմել մեզ:

Յոթամյա սահմանափակում որոշ ոչ քաղաքացիների համար

Որոշ փախստականներ եւ այլ ոչ փախստականներ կարող են SSI ստանալ մինչեւ յոթ տարվա ընթացքում: Եթե ձեր SSI-ի վճարումները սահմանափակվում են մինչեւ յոթ տարով կապված ոչ քաղաքացու ձեր որոշակի կար գավիճակի հետ, ապա մեր կողմից ձեզ ուղարկվելու է նամակ, նշելով ձեր յոթամյա ժամկետի ավարտը: Մեր կողմից ուղարկվելու է եւս մեկ նամակ, բացատրելով բողոքարկելու ձեր իրավունքները՝ նախքան մեր կողմից ձեր վճարումների դադարեցումը:

Եթե դուք SSI-ի գործող կամ նախկին ստացող եք, որն ենթակա է SSI ստանալու իրավասությանը յոթամյա ժամկետի սահմանափակման ներքո, ապա մենք խրախուսում ենք, որպեսզի դուք դիմեք ԱՄՆ քաղաքացիության եւ ներ գաղթի ծառայություններին (USCIS)՝ պարզելու, թե ինչպես.

- Արա գացնել վարույթում գտնվող ձեր հպատակա գրման (N-400) կամ կար գավիճակի ճշ գրտման (I-485) ընթացքը. ինչպես նաեւ
- Ազատվել ձեր դիմումի հետ կապված վճարներից:

Դուք (կամ ձեր ներկայացուցիչը) կարող եք զան գահարել USCIS՝ 1-800-375-5283 հեռախոսահամարով (սպասե՛ք SSI-ի օպցիային կամ հիմնական մենյուին) կամ 1-800-767-1833 հեռախոսահամարով՝ եթե դուք խուլ եք կամ ունեք լսողության դժվարություն (TTY) – խնդրե՛ք արա գացված ընթացք: Արա գացված ընթացքի համար դուք կարող եք դիմել նաեւ գրավոր կար գով կամ USCIS-ի տեղական գրասենյակ գնալու միջոցով: Անպայման հայտնե՛ք նրանց, որ դուք գործող կամ նախկին SSI ստացող եք:

Ազատումների մասին լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար զան գահարե՛ք վերը նշված անվճար հեռախոսահամարով, դիմե՛ք USCIS-ի ձեր տեղական գրասենյակին կամ այցելե՛ք USCIS-ի վեբ կայքը՝ ***www.USCIS.gov/feewaiver*** հասցեով:

Աշխատանքի կրեդիտներ

Մարդու աշխատանքային պատմությունը որոշում է իր իրավասությունը Սոցիալական ապահովության նպաստներ ստանալու, ինչպես նաեւ SSI ստանալու իրավասությունը՝ որոշ ոչ քաղաքացիների համար: Անձը ստանում է «աշխատանքի կրեդիտներ» վաստակած գումարի հիման վրա: Յուրաքանչյուր տարի աշխատանքի կրեդիտի համար պահանջվող հասույթը փոքր-ինչ բարձրանում է ըստ միջին հասույթների մակարդակների բարձրացման:

Սոցիալական ապահովության նպաստների համար անձը կարող է ստանալ տարեկան առավելագույնը չորս կրեդիտ: Կրեդիտների այս սահմանափակումը կիրառելի չէ ոչ քաղաքացիների SSI-ի նպաստների նկատմամբ: Ոչ քաղաքացին կարող է նաեւ ստանալ տարեկան մինչեւ չորս լրացուցիչ կրեդիտ ամուսնու (կնոջ) կամ ծնողի աշխատանքից:

Աշխատանքի կրեդիտները անորոշ ժամանակով մնում են անձի Սոցիալական ապահովության հաշվառման փաստաթղթերում: Աշխատանքի լրացուցիչ կրեդիտները չեն գրանցվում ոչ քաղաքացու աշխատանքի հաշվառման մեջ – հաշվի չեն առնվում Սոցիալական ապահովության նպաստների մասով: Լրացուցիչ տեղեկատվության

(շրջել)

համար տես *Ինչպես Վարկեր Եք Վաստակում* (Հրապարակում համար 05-10072-AM):

Մեզ պետք է ձեր կար գավիճակի ապացույցը

Երբ դուք դիմում եք SSI-ի համար, ապա դուք պետք է ներկայացնեք ձեր ոչ քաղաքացու կար գավիճակի ապացույցը: ԱՄՆ զինված ուժերում ծառայած ոչ քաղաքացիները պետք է մեզ ներկայացնեն զինվորական ծառայության ապացույցը: Ստորև նշված են ձեր կողմից ներկայացման ենթակա հնարավոր փաստաթղթերը.

- Որպես ձեր ոչ քաղաքացու կար գավիճակի ապացույց՝ գործող Ձեւաթուղթ I-94 կամ I-551 Ներքին անվտանգության վարչությունից (DHS) կամ ներգաղթի իրավունքի դատավորի արտաքսումը մերժելու կամ ապաստան տրամադրելու մասին որոշում. կամ
- Որպես զինվորական ծառայության ապացույց՝ ԱՄՆ-ի զորացրման փաստաթղթեր (DD Ձեւաթուղթ 214), որոնք վկայում են պատվարժան զորացրման մասին՝ անկախ ձեր ոչ քաղաքացու կար գավիճակից:

Ձեր Սոցիալական ապահովության տեղական գրասենյակի կողմից կարող է նշվել, թե ինչ տեսակի այլ փաստաթղթեր դուք կարող եք ներկայացնել ձեր կար գավիճակը ապացուցելու համար:

Տեղեկատվություն Medicaid-ի մասին

Եթե դուք ձեր SSI-ի հիման վրա ստանում եք փոխհատուցում Medicaid-ով, ապա ձեր Medicaid-ը պետք է շարունակվի այնքան, որքան դուք ստանաք SSI:

Դուք կարող եք ներկայացնել նոր հայց

Եթե ձեր SSI-ի վճարումները դադարում են ձեր ոչ իրավասու ոչ քաղաքացի լինելու պատճառով, ապա դուք կարող եք կրկին դիմել: Դիմե՛ք մեզ անմիջապես ԱՄՆ քաղաքացի դառնալուց, ձեր ներգաղթի կար գավիճակը փոփոխվելուց հետո կամ եթե կարծում եք, որ դուք բավարարում եք պահանջներին, կամ էլ՝ ունեք աշխատանքի 40 կրեդիտ: Ձեզանից կպահանջվի, որպեսզի մեզ ներկայացնեք ձեր հպատակա գրման վկայա գրումը կամ այլ փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս ձեր ներգաղթի կար գավիճակը:

Եթե դուք ունեք հովանավոր

Միացյալ Նահանգներ մուտք գործելիս դուք հավանաբար ունեցել եք ինչ-որ մեկին, ով համաձայնություն է ստորագրել ձեզ աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ: Այդ համաձայնությունը կոչվում է աջակցության մասին երդմամբ տրվող հայտարարություն, իսկ այն ստորագրած անձը՝ հովանավոր:

Մեր կողմից հաշվի է առնվում ձեր հովանավորի եւ իր ամուսնու (կնոջ) եկամուտը

եւ միջոցները այնպես, ինչպես ձերը՝ Միացյալ Նահանգներ ձեր մուտք գործելուց ժամանակից սկսած: Սոցիալական ապահովության ձեր տեղական գրասենյակը կարող է լրացուցիչ տեղեկատվություն տալ այս կանոնների եւ դրանց նշանակության մասին:

Սոցիալական ապահովության համարներ

Եթե դուք Միացյալ Նահանգներում աշխատելու իրավունքով օրինական հիմունքներով ընդունված ոչ քաղաքացի եք, ապա դուք կարող է Սոցիալական ապահովության համարի կարիք ունենաք: Հարցրե՛ք մեր հրապարակումը՝ *Սոցիալական Ապահովության Համարներ Ոչ Քաղաքացիների Համար* (Հրապարակում համար 05-10096-AM):

Քաղաքացի դառնալը

Քաղաքացի դառնալու մասին լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար անվճար զանգահարե՛ք Միացյալ Նահանգների քաղաքացիության – ներգաղթի ծառայություններին (USCIS)՝ 1-800-375-5283 հեռախոսահամարով (խուլերը կամ լսողության դժվարություն ունեցողները զանգահարում են 1-800-767-1833 TTY հեռախոսահամարով): Դուք նա– կարող եք այցելել USCIS-ի ձեր տեղական գրասենյակը կամ այցելել նրանց առցանց՝ ***www.uscis.gov***:

Սոցիալական Ապահովության հետ կապ հաստատելը

Ոչ քաղաքացիների համար SSI-ի մասին հավելյալի համար տես «լրացուցիչ տեղեկատվություն» էջը առցանց՝ ***www.socialsecurity.gov/pubs/11051-sup.html*** հասցեով:

Մեր վեբ կայքը հանդիսանում է Սոցիալական ապահովության ծրագրերի մասին տեղեկատվության արժեքավոր աղբյուր: Մի շարք բաներ դուք կարող եք կատարել առցանց:

Մեր վեբ կայքը օգտագործելուց բացի դուք կարող եք անվճար զանգահարել՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով: Մեր կողմից բոլոր հեռախոսազանգերը պահվում են գաղտնի: Մենք կարող ենք պատասխանել որոշակի հարցերի ժամը 7-ից մինչեւ 19-ը՝ երկուշաբթիից մինչեւ ուրբաթ: Մենք կարող ենք ապահովել թարգմանչի անվճար ծառայություններ՝ հեռախոսով կամ ձեր տեղական գրասենյակում: Մենք նաեւ տրամադրում ենք տեղեկատվություն տեղեկատվության ավտոմատացված շուրջօրյա հեռախոսային ծառայության միջոցով: (Օգտվելով մեր ավտոմատ պատասխանիչ համակարգից, դուք կարող եք հայտնել մեզ ձեր նոր հասցեն կամ խնդրել Medicare-ի փոխարինող քարտ:) Եթե դուք խուլ եք կամ ունեք լսողության դժվարություն, ապա կարող եք զանգահարել մեր TTY հեռախոսահամարով՝ **1-800-325-0778**:

Մենք ուզում ենք նաեւ երաշխավորել, որպեսզի դուք ստանաք ճշգրիտ եւ քաղաքավարի պատասխան: Այդ պատճառով որոշակի հեռախոսազանգեր հսկվում են Սոցիալական ապահովության երկրորդ ներկայացուցչի կողմից:

Social Security Administration
SSA Publication No. 05-11051-AM
Supplemental Security Income For Noncitizens (Armenian)
April 2008